ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

21 մայիսի 2024թ.N Ե-3435

«ՄԱՔՍ ՇԻՆ»ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՎՈՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի Վ. Պետրոսյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ)և «Մաքս Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 01.04.2024 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26-1» ծածկագրով ապրանքի մատուցման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝
Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք (Հաղորդալար 1), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունները»:
Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարավում է լուծված կամ փոփոխված»:
«Մաքս Շին» ՍՊԸ-ի կողմից ստացվել է պատճառաբանված գրություն, այն է.
Աբովյանի համայքնապետարանի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26-1» ծածկագրով պայմանագիրը ընկերությունը մասնակի կատարել չի կարող, քանի որ Էլեկտրոնային աճուրդի ընթացքում տեղի է ունեցել տեխնիկական խնդիր, որի արդյունքում 1-ին և 4-րդ չափաբաժինների պատուհանները փոխված են եղել տեղերով: Արդյունքում 1-ին չափաբաժնի արժեքը (10000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի) մուտքագրվել է 4-րդ չափաբաժնում, որի նախնական արժեքն է եղել 152000 ՀՀ դրամ: Հետևաբար, հնարավոր չէ մատակարարել 4-րդ չափաբաժինը (Հաղորդալար 1) 12000 ՀՀ դրամի դիմաց:«Մաքս Շին» ՍՊԸ-ն հրաժարվում է վերը նշված չափաբաժնով ապրանքի մատակարարումից և պատրաստ

է օրենքով սահմանված կարգով վճարել տվյալ չափաբաժնի համար պայմանագրի և որակավորման ապահովումները:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի Հավելված 1-ի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Աբովյանի համայնքապետարանի և «Մաքս Շին» ՍՊԸ-ի միջև կնքված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/26-1» ծածկագրով Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծվում է Գնորդի կողմից:
Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 15 200 ՀՀ դրամ և 22 800 ՀՀ դրամ Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և ավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:
Ընդունել ի գիտություն.
Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կապ. Գնումների բաժնի պետ
Ա. Ծատուրյան
+37460536402